

## ԲԱՅՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ԴԱՅԼԻՃԸ



Հայաստանի Ազգային Ժողովի վերանորոգումը դառնալիս բացման Պաշտօնական արարողության ընթացքին ելույթ կ'ունենայ Սերժ Սարգսյանը

Հոկտեմբեր 22-ին պաշտօնական բացումը կատարուեցաւ Հայաստանի Ազգային Ժողովի վերանորոգումը դառնալիս: Պաշտօնական արարողութեան մասնակցեցան գործող նախագահ Սերժ Սարգսյանն եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդը:

Վերանորոգման աշխատանքները սկսած էին այս տարուայ Մայիսին եւ արժանի մօտ 1,2 միլիոն տոլար: Ժողովարարները ամբողջովին փոխուած է, դառնալով աւելի ճոխ ու գործնական: Բոլոր պատգամաւորները այժմ կարելիութիւն ունին իրենց նստած տեղէն օգտուելու համարագրիչներէն, պատասաններէն եւ բարձրախօսներէն:

Դահլիճը փոխած է նաեւ իր ձեւը՝ ուղղանկիւնէն դառնալով օվալաձեւ: Ազգային Ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան ողջոյնի իր

խօսքին մէջ դահլիճը նմանցուց Արթուր Արքայի «Կլոր սեղանի»-ն, յայտնելով, թէ այսպիսով կ'ապահովուի քննարկումներու աւելի ժողովրդավարական մթնոլորտ:

Սերժ Սարգսյան իր ելույթին մէջ յատկապէս ըսաւ. - «Իւրաքանչիւր խորհրդարան կոչուած է ներկայացնելու իր ժողովրդի կամքը, ընտրողներին բոլոր շերտերը, նրանց շահերը, յոյսերն ու իղձերը: Ընտրելով մեր հասարակական եւ քաղաքական կեանքի կազմակերպման ժողովրդավարական ճանապարհը՝ մենք եւս որդեգրել ենք յայտնի չափանիշներով առաջ շարժուելու ուղին: Անչափ կարեւորում մեծ Հայաստանի ժողովրդի խորապէս մտածուած եւ կշռադատուած այդ ընտրութիւնը: Այս ճանապարհին շատ բան արդէն արել ենք, սակայն դեռեւս աւելի շատ բան ունենք անելու»:

## ԱՍՏՐԱԽԱՆԻ ՄԷՋ ԱՏՈՐԱԳՐՈՒԱԾ Է ՄԻԱՏԵՂ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները Չորեքշաբթի, Հոկտեմբեր 27-ին Ատրախանի մէջ կայացած եռակողմ հանդիպման ժամանակ ստորագրած են միատեղ յայտարարութիւն:

«Խօսքը վստահութեան ամբողջական ուղղուած միջոցառումներուն ուղղուած յատուկ հռչակագրի մասին է», - հանդիպման աւարտին լրագրողներուն ըսած է Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւ՝ աւելցնելով, որ փաստաթուղթով կ'ենթադրուի «ուղղափառութիւններու փոխանակութիւն եւ գոհուածներու մարմիններու վերադարձ»:

«Վերահաստատելով 2008 թուականի Նոյեմբերի 2-ին Մոսկուայում ստորագրուած համատեղ յայտարարութեան դրոյթները՝ նախագահները ընդգծեցին, որ քաղաքական-դիւանագիտական միջոցներով հակամարտութեան կարգա-

ւորումը պահանջում է հետագայ ջանքեր հրադադարի ռեժիմի եւ ռազմական ոլորտում վստահութեան ամրապնդման միջոցների ամրապնդման ուղղութեամբ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Ըստ Հայաստանի նախագահի մամուլի գրասենեակի, նախագահները քննարկած են ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործընթացի մանրամասներ՝ բանակցային աշխատանքը մինչեւ Ատտանայի մէջ կայանալիք ԵԱՀԿ գագաթի ժողովը շարունակելու եւ հիմնական սկզբունքներու շուրջ փոխհամաձայնութեան գալու նպատակով:

Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Արմէն Արզումանեան «Ազատութիւն» ռատիոկայանին փոխանցած է, որ եռակողմ հանդիպումէն յետոյ բանակցութիւնները շարունակուած են արտաքին գործոց նախարարներու մասնակցութեամբ:

## ՀՐԱՆԴ ԴԻՆՔԻՆ ՍՊԱՆԱԾ ՕԳԻՆ ՍԱՄԱՍԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱՓՈԽՈՒԱԾ Է ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ԴԱՏԱՐԱՆ

Պոլսոյ «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Դինքի սպանութեան մէջ մեղադրուող Օգին Սամասի ճակատագիր պիտի որոշուի անչափահասներու յատուկ դատարանէն ներս:

Դինքի սպանութեան գործով Հոկտեմբեր 25-ին տեղի ունեցած դատական հերթական նիստի ընթացքին, Պէշիկթաշի բարձրագոյն քրէական դատարանը բաւարարելով 20-ամեայ Օգին Սամասի փաստաբանի դիմումը, որոշած է դատավարութիւնը տեղափոխել անչափահասներու դատարան:

Սամասի դատապաշտպան Լեւենթ Երլըրըմ իր միջնորդութիւնը հիմնաւորած է այս տարուայ ընթացքին թրքական խորհրդարանի ընդունած մէկ օրէնքի այն դրոյթով, որու համաձայն ընդհանուր իրաւասութեան դատարանները կը գրկուին 18 տարեկանը չամբողջացուցած անձերու դէմ յարուցուած քրէական գործերը քննելու իրաւունքէն:

Հրանդ Դինքի մտերիմները արդէն իսկ կը զգուշացնէին, որ քուրտերու համար կատարուող զիջումներու անուան տակ ընդունուող այս օրէնքը, կրնայ ազդեցութիւն ունենալ նաեւ Սամասի վրայ: Դինքի սպանութեան օրը՝


2007-ի Յունուար 19-ին, Օգին Սամասի 18 տարեկան տակաւին չէր ամբողջացուցած:

Դատարանի այս որոշումը Դինքի հարազատներու եւ ընկերներու մօտ լուրջ դժգոհութիւն յառաջացուցած է: Դատական նիստէն անմիջապէս ետք, Հրանդ Դինքի այրին՝ Ռաքէլ Դինք, ակնարկելով խորհրդարանի կողմէ ընդունուած օրինագիծին, որու հիման վրայ Սամասի գործը տեղափոխուած է անչափահասներու դատարան, ըսած է. - «Օրէնքը շղթայեց արդարադատութեան»:

Հրանդ Դինքի եղբայրը՝ Խոսրով իր կարգին, դիմելով Պէշիկթաշի քրէական դատարանի նախագահին, ըսած է. - «Արդեօք այսպէս կեանքի կը կոչեն արդարադատութիւնը: Գրեթէ չորս տարի անցած է սպանութեան օրէնքի փոխուած է այդ ընթացքին:

Հրանդ Դինքի սպանութեան գործով յաջորդ դատական նիստը կը կայանայ յաջորդ տարուայ Փետրուար 7-ին, առանց Օգին Սամասի մասնակցութեան: Դատարանի առջեւ կը կանգնի միայն Պոլսահայ լրագրողի սպանութիւնը կազմակերպելու մէջ մեղադրուողներ՝ Եսայի Հայալ եւ Էրհան Թունջէլ:

## ՔՈՒԷԱՐԿԵՑԷՔ ՀԱՅ ԱՍԵՐԻԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՎԱՅԵԼՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՄ



ՄԴՀԿ Հայ Ամերիկեան խորհուրդը կոչ կ'ուղղէ Հայ քաղաքացիներուն Նոյեմբեր 2-ին տեղի ունենալիք ընտրութիւններուն քուէարկելու հետեւեալ թեկնածուներուն.

Քալիֆորնիոյ կառավարիչի պաշտօնին՝ նախկին կառավարիչ ձէՐԻ ՊՐԱՌԻՆԻՆ:

Ծերակոյտի անդամ՝ ՊԱՐՊԱՐԱ ՊՈՔՍԸՐԻՆ:

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 29-րդ ընտրաշրջանէն ԱՏԱՄ ՇԻՖԻՆ:

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 27-րդ ընտրաշրջանէն ՊՐԷՏ ՇԸՐՄԸՆԻՆ:

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 38-րդ ընտրաշրջանէն ՀԱՌԻԸՐՏ ՊԸՐՄԸՆԻՄ:

Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի անդամ՝ 43-րդ ընտրաշրջանէն ՄԱՅՔ ԿԱԹՈՅԻՆ:

Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի անդամ՝ 44-րդ ընտրաշրջանէն ԱՆԹՈՆԻ ՓՈՐԹՆԹԻՆՈՅԻՆ:

### ՕՐՈՒԱՆ ԸԱՐՅԵՐՈՒՆ ԸՆՏ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ՇԱՏ ԿԱՐԾ Է

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Ուղղիղ երկու տարի առաջ այս օրերուն, Ամերիկայի ժողովուրդը կը պատրաստուէր ընտրելու իր նոր նախագահը: Ճորճ Պուշի պաշտօնավարութեան ութը տարիները կը մօտենային իրենց աւարտին: Երկիրը միտնուած էր երկու պատերազմներու մէջ, իւրաքանչիւր ամիս 700 հազար ամերիկացիներ անգործներու շարքը կ'անցնէին, ֆինանսական հիմնարկութիւնները փուլ կու գային, տնտեսութիւնը քայքայման եզրին էր, իսկ նախագահ Պուշի կուսակցութիւնը՝ Հանրապետականները բարոյագրուած վիճակի մէջ էին:

Նոյեմբեր 2-ին տեղի պիտի ունենան նոր ընտրութիւններ ու այս առթիւ բոլոր կանխատեսութիւնները կ'առաջնորդեն հոն, որ Հանրապետականները մեծ յաջողութիւններու պիտի հասնին, յատկապէս դառնալով մեծամասնութիւն՝ Գոնկրէսի Ներկայացուցիչներու Տունէն ներս եւ նուազ հաւանականութեամբ՝ Մերակոյտէն ներս:

Ի՞նչ տեղի ունեցաւ այս երկու տարիներու ընթացքին, որ նման շրջադարձ արձանագրուեցաւ ամերիկացիներու մօտ:

Նախագահ Օպամա իր նախընտրական արշաւի ընթացքին խոստացաւ ամերիկեան զօրքերը դուրս բերել իրաքեան ուսուցողական կատարեց իր խոստումը: Ան խոստացաւ բարեփոխել երկրի առողջապահական համակարգը եւ ի գին մեծ դժուարութիւններու յաջողեցաւ հասնիլ այդ նպատակին: Օպամա եւ Դեմոկրատ Գոնկրէսը կարգ մը ազդու միջամտութիւններով եւ նոր օրէնքներ մշակելով կարողացան բարեկարգել դրամատնային եւ ֆինանսական հաստատութիւններու գործունէութիւնը ու այդպիսով կասեցնել տնտեսական անկումը, որ սկսելով ամերիկայէն տարածուած էր ամբողջ աշխարհով: Անգործներու թիւը թէեւ չնուազեցաւ, սակայն որոշ կայունութիւն մտցուած է նաեւ այդ դաշտէն ներս ու վերջին ամսուայ տուեալներով աւելի շատ գործատեղեր բացուած են, քան փակուած: Հակառակ այս բոլորին, երկիրը կը շարունակէ մնալ տնտեսական ծանր վիճակի մէջ ու ժողովուրդի մօտ դժգոհութիւնը կը մնայ համատարած:

Իսկ այս միջոցին ի՞նչ կ'ընեն Օպամայի հակաուկորդները՝ Հանրապետականները: Ամէն քայլափոխի կը քննադատեն նախագահին, որ իրենց իրաւունքն է: Սակայն, միաժամանակ երկրէն ներս կը սերմանեն անհանդուրժողականութեան մթնոլորտ: Գոնկրէսէն ներս կը մերժեն Դեմոկրատներու բոլոր նախաձեռնութիւնները, դիմացը իրենց այլընտրանքային առաջարկները առանց ներկայացնելու, իսկ մամուլի միջոցաւ լուրեր կը տարածեն, թէ Օպամա մահմետական է, ան գաղտնի սոցիալիստ է, Ամերիկայի մէջ ծնած չէ եւ նման այլ կողմնակի հարցերով կը շահագործեն ժողովուրդի դիւրագրագութիւնները:

Ամիսներ շարունակ այս լա-

րերուն վրայ խաղալ է ետք, հանրապետականներու ծոցէն ծնունդ առաւ նոր շարժում մը «Թէյի կուսակցութիւն» (Tea Party) անուան տակ, այդ անունը վերցնելով 1773-ին ծայր առած Ամերիկայի անկախութեան շարժումէն, երբ ըմբոստանալով Անգլիացի գաղութարարներու դէմ, Պոսթոնի նաւահանգիստի աշխատւորները սկսան անգլիական նաւերու բերած թէյը թափել ծովուն մէջ՝ իբրեւ բողոքի նշան պարտադրուած բարձր տուրքերուն:

Պետական աճող բացի ոչ մի բողոքի ելած «Թէյի կուսակցութեան» անդամները, բազմաթիւ նահանգներու մէջ յաջողեցան դուրս մղել Հանրապետական կուսակցութեան չափաւորական թեկնածուները ու անոնց տեղ բերել ծայրայեղականներ, որոնցմէ շատեր նոյնիսկ չունին համապատասխան կարողութիւն՝ Գոնկրէսի անդամ դառնալու: Այս շարժումի թեկնածուները կ'առաջարկեն վերացնել Ընկերային Ապահովութիւնը (Social Security), 65 տարեկանէն վեր եղողներու առողջապահական ապահովագրութիւնը (Medicare), ընկերային այլ նպաստներ ու նաեւ Դաշնակցային կառավարութեան կրթական բաժանմունքը (նախարարութիւնը): Պետական ծախսերը կրճատելու պատրուակին տակ կատարուող այս առաջարկներով, իւրաքանչիւր ամերիկացի կը ձգտուի իր ճակատագրին: Անոնց կարծիքով պետութիւնը պարտաւոր չէ հոգալու ոեւէ մէկուն:

Մինչեւ օրս կատարուած հանրային կարծիքի հարցախոյզները ցոյց կու տան, որ ժողովուրդը դժգոհ ըլլալով իր վիճակէն, պատրաստ է իր քուէն տալու նոր դէմքերու: Այս կացութեանն օգտուողները կ'ըլլան ներկայիս փոքրամասնութիւն կազմող Հանրապետականները ու անոնց հետ միասին «Թէյի կուսակցութեան» կողմնակիցները, որոնք կը խոստանան վերատեսուութեան ենթարկելու Նախագահ Օպամայի բոլոր ծրագիրները ու շրջանաւարտ Գոնկրէսի վաւերացուցած օրինագիծերը:

Նախագահ Օպամա նահանգէնահանգ այցելելով ժողովուրդին կը փորձէ յիշեցնել, թէ ինչպիսի ժառանգ ստացած էր նախորդը վարչակարգէն եւ կը փորձէ համոզել, որ պէտք չէ երկիրը դարձնել յանձնել անոնց, որոնք գլխաւոր պատասխանատուներն են այսօրուայ վիճակին:

Մէկ բան յստակ է թէ, Միացեալ Նահանգներու ժողովուրդի յիշողութիւնը բաւականին կարճ է եւ փոխանակ համբերատարօրէն սպասելու, որ երկու տարին իսկ չամբողջացուցած նախագահը, Դեմոկրատ մեծամասնութեան հետ բարունակէ իրականացնել ի բարենորոգչական ծրագիրները ու երկիրը դուրս բերէ այն փոսէն, որու մէջ ինկած էր ճորճ Պուշի եւ Հանրապետականներու վարած ընկերային, տնտեսական եւ արտաքին քաղաքականութեան պատճառաւ, կը պատրաստուի իր ձայնը տալու Հանրապետականներուն:

### «ԱԽՊԵՐ» ԿԱՍ «ԱՊԵՐԱԽՏ»

ՅԱԿՈՒԲԱԴԱԼԵԱՆ

«Ապերախտ են այն մարդիկ, ովքեր օգտուում են բանակի կատարած սիրագործութեան արդիւնքից, բայց փնտրում են այդ բանակը: Այդպիսի մարդիկ ո՞ւմ են պէտք ընդհանրապէս», ասել է հանգստեան օրերին Ախուրեանի շաքարի գործարանի բացմանը մասնակցած Սերժ Սարգսեանը, լրագրողների հետ ճեպագրուցում անդրադառնալով բանակի խնդիրներին:

Բնականաբար հարց է առաջանում, թէ ովքեր են այդ ապերախտները: Բանն այն է, որ դա շատ կարեւոր է, որովհետեւ դրանից յետոյ պէտք է պարզուի, թէ բանակի սիրագործութեան ինչ արդիւնքներից են նրանք օգտուում: Այդ արդիւնքները հոգեւոր են, բարոյակա՞ն, թէ՞ նիւթական: Բանն այն է, որ բանակի սիրագործութեան արդիւնք է խաղաղութիւնը, բայց ամէն մարդ խաղաղութիւնից օգտուում է տարբեր կերպ:

Օրինակ, ներկայիս իշխանութիւնը խաղաղութիւնից օգտուում է անձնական մեծ սեփականութեան,

չքեղ եւ յարմարաւէտ կեանքի տեսքով: Իրենց բիզնեսների մասին բացառապէս յայտարարում են Աժ նախագահը, տարբեր նախարարներ, պատգամաւորներ, նրանց հարգատ-բարեկամները: Բիզնեսմեն են գրեթէ բոլոր պաշտօնեաների մօտ ու հեռու հարազատները, սկսած հանրապետութեան նախագահից:

Խոշոր սեփականատէրեր են նոյն այդ բանակի զենեւալները, որոնք շրջում են այնպիսի մեքենաներով եւ ապրում են այնպիսի տներում, որպիսին իրենց երեւի թէ հոլիվուդեան աստղերն են թոյլ տալիս ունենալ:

Կարծես թէ ակնյայտ է, թէ ինչպէս են բանակի սիրագործութեան արդիւնքից օգտուում իշխանութեան եւ նրան մօտ կանգնած շրջանակները. նրանք բաժանել են, քվոտաւորել են բանակի սիրագործութեան արդիւնքը՝ խաղաղութիւնը, եւ տնօրինելով այդ քվոտաները, դարձել են շքեղ կեանքի տէրեր:

Բայց անկասկած է, որ Սերժ Սարգսեանն «ապերախտ» ասելով

Շաք.ը էջ 17

### Ո՞Վ Է ՍՏԱԽՕՍԸ ԿԱՍ ՀԻԼԱՐԻ «ԽԱՂԱՑՆԵԼՈՒ» ԻՐԱԿԱՆ ԳԻՆԸ

ԿԱՐԷՆ ՅԱԿՈՒԲԱՆԵԱՆ

Հայաստանի իշխանական վերնախաւը հերթական սկանդալի մէջ է յայտնուում: «Եու թուր»-ում տեղագրուած տեսանիւթը, որտեղ ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը սփիւռքահայ մի երիտասարդի բացատրում է, թէ ինչու ԱՄՆ վարչակազմը չի կատարում իր խոստումը ցեղասպանութեան ընդունման մասով, շատ աւելի լուրջ հետեւանքներ է ունենալու, քան պզոյական պատմութիւնը:

Բանն այն է, որ Բայդենը հայ երիտասարդին ասում է, թէ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնողականութեան շրջանակներում են իրենք անժամանակ հրաժարուում Հայոց ցեղասպանութեան ընդունումից: Դժուար թէ, Բայդենը ստած լինէր: Իսկ եթէ ստում է, ապա հրապարակաւ պէտք է հերքի ու ներողութիւն խնդրի եւ՝ ամերիկահայերից, եւ հայաստանցիներից: Ընդ որում՝ այդ ամէնը պէտք է տեղի ունենայ շատ արագ, որպէսզի ԱՄՆ-ում օրերս սպասուող ընտրութիւնների ժամանակ հայ լոբբիստները կարողանան հնարաւորինս մեծ չափով ճնշել խոստումներից խուսափող ղեմկիրաւորներին:

Իսկ եթէ առաջնորդուենք այն վարկածով, որ Բայդենն, այնուամենայնիւ, չի ստում ու ՀՀ նախագահն իրօք նախաձեռնողականութիւն է ցուցաբերել, ապա շատ տխուր պատկեր է ստացուում: Փաստօրէն, Սարգսեանը ցեղասպանութեան առեւտրով է զբաղւած եղել, եթէ հաւատանք այդ տեսանիւթում հնչած տեղեկատուութեանը:

Եթէ այս ամէնին աւելացնենք նաեւ այն, որ Գիւլի երեւանեան այցից յետոյ Սերժ Սարգսեանը հպարտութեամբ պնդում էր, թէ ինքը դէմ չէ, որ Թուրքիան օժանդակող կողմ դառնայ Ղարաբաղի խնդրի լուծման հարցում, ապա «Ֆոտոթղթային» դիւանագիտութեան իրական պատկերն ամբողջական է դառնում: Իսկ պատկերն

այդ, մեր դիտարկմամբ, այսպիսին է եղել. Սարգսեանը «Ֆոտոթղթ» նախաձեռնել է «Ղարաբաղը՝ մեզ, ցեղասպանութիւնն ու կարսի պայմանագիրը՝ ձեզ» տրամաբանու-

Շաք.ը էջ 17

**ՄԱՍԻՍ ՏԱԲԱՍՔԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
 ԳԱԲՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
 Յեռ. (626) 797-7680  
 Ֆաքս. (626) 797- 6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail),  
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
 MASSIS WEEKLY  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

«Ա1+»-Ի ՄՐՑԱԿԻՑԸ «ԱՐՄՆԻԻՉ»-Ն Է

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային յանձնաժողովը (ՀՌԱՀ) հրապարակել է նախապէս յայտարարուած 18 մրցոյթներու մասնակիցներին ցանկը, ինչպէս նաեւ՝ այդ մրցոյթներու օրէնքով պահանջուող փաստաթղթերի հրապարակման ժամանակացոյցը:

«Այսօր արդէն մենք կը հասկանանք, թէ որոնք են այն ընկերութիւնները, որոնք յայտարարուած 18 մրցոյթներու հնարաւորութիւն կ'ունենան շարունակելու իրենց գործունէութիւնը որպէս հեռուստաընկերութիւններ, որոնք միաժամանակ կ'ապահովուեն եւ անալոգային հեռարձակման յաճախութեամբ, եւ իրաւունքով ներգրաւուելու թուային մուլտիպլեքսում», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում պարզաբանեց Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալեանը:

18 մրցոյթներից միայն 2-ի դէպքում է, որ կայ մրցակցութիւն. «Ա1+»-ի հետ նոյն յաճախութեանն է յաւակնում «Արմ-նիւզ»-ը, իսկ ԱԼՄ-ի հետ՝ «Երեւան» հեռուստաընկերութիւնը:

Այս դիտարկմանն ի պատասխան Ամալեանը ասաց. - «Թէ ինչու յատկապէս 18-ից 2-ի դէպքում է եղել մրցակցային պարա-



զայ, թերեւս ժամանակ է պահանջուում հասկանալու համար: Ինքս ակնկալում էի աւելի ակտիւ մասնակցութիւն»:

Մրցոյթները մասնակիցների ներկայացրած յայտերի եւ կից փաստաթղթերի հրապարակումը կը սկսուի Հոկտեմբերի 27-ին եւ կ'աւարտուի 29-ին՝ համաձայն ՀՌԱՀ-ի հաստատած ժամանակացոյցի:

«Ընդհանուր առմամբ, մրցոյթի այս ձեւը, մօտեցումը, երբ ընդամէնը 2 յաճախութիւնների համար է ուշալ մրցակցութիւն, մի քիչ լիչեցնում է մեր ընտրութիւնների այն տարածքները, որտեղ մէկ թեկնածու էր իր թեկնածութիւնը դնում եւ անցնում էր», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ասաց Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի նախագահ Աշոտ Մելիքեանը:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՎՍԱՅ Է, ՈՐ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԱԶԱՏ Կ'ԱՐՁԱԿՈՒՆ ՄՕՏ ԱՊԱԳԱՅԻՆ

Հայաստանի առաջին նախագահ, ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ բացառիկ հարցազրոյցի ընթացքին վատահոլութիւն յայտնած է, որ մօտ ապագային ազատ կ'արձակուին բանտերու մէջ գտնուող մէկ տասնեակէ աւելի ընդդիմադիր գործիչները:

«Բոլորին են ազատ արձակելու», - ըսած է Տէր-Պետրոսեան ու հաստատած որ, գործընթացը սկսած է եւ այդ մասին կասկած չկայ:

Հարցին, թէ ինչի մասին գրուած է Եւրախորհուրդի գլխաւոր քարտուղար Թորբեորն Եազլանդի հետ, Տէր Պետրոսեան պատասխանած է. - «Մենք ուրիշ թէմա չունենք, մեր թեման իրենց իսկ սահմանած թեման է՝ 1677 բանաձեւն է: Մենք հասնելու ենք այն բանին, որ այդ բանաձեւը մինչեւ վերջ կատարուի: Այսպէս կը հեղինակագրուի այդ ամբողջ կառուցը»:

Հարցին, թէ ինչո՞ւ մինչեւ հիմա կատարուած չեն այդ բանաձեւի պահանջները, Տէր-Պետրոսեան ըսած է. - «Համաներումից յետոյ նրանք կարծես թէ իրենց

բաւարարուած զգացին, որ իբր թէ մեծ գործ են արել, եւ դրա համար նոյնիսկ մոնիթորինգի կարգավիճակը նուազեցրին: Բայց անցած մէկ տարին, կարծում եմ, նրանց էլ համոզել է, որ իրենց սպասումները չեն արդարացել, եւ, ըստ էութեան, Հայաստանի իշխանութիւնները իրենց խաբել են: Ուղղակի խաբել են: Ես չեմ յղի հիմա ինչ-որ մարդկանց, բայց ես գիտեմ, որ նրանց տրամադրութիւնը հիմա այդպիսին է: Նրանք իրենց խաբուած են զգում, որը հեղինակագրուած է իրենց իսկ կառուցը: Դա նրանք չեն հանդուրժելու»:

Լեւոն Տէր-Պետրոսեան կարծիք յայտնեց, որ Եւրախորհուրդը պիտի ուժեղացնէ ճնշումները Հայաստանի իշխանութիւններու վրայ. - «Նրանք ունեն վեց սանկցիա, որ կարող են կիրառել Եւրախորհրդի անդամ ցանկացած երկրի նկատմամբ: Նրանք մէկը սպառնացին՝ Հայաստանի պատուիրակութեանը քուէարկութեան ձայնից գրկելու պատժամիջոցն էր, եւ դրանով հասան այդ կիսատ-պրատ համաներմանը: Նրանք ունեն աւելի խիստ պատժամիջոցներ էլ՝ ընդհուպ մինչեւ Եւրախորհրդից երկրին վտարելը»:

ՀՅԴ-Ն ՅՈՅՍ ՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՆԱԼ ԱՅՆ, ԻՆՉ ՉԻ ՅԱԶՈՂՈՒԻ ՍՏԱՆԱԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆԻՑ

«Մենք լաւ հասկանում ենք, որ լինելով ընդդիմութեան մէջ, այս արատաւոր ընտրական համակարգի պայմաններում ընտրութիւններին մասնակցելը չափազանց բարդ գործ է լինելու: Բայց մենք նաեւ ամէն ինչ անում ենք, որպէսզի արատաւոր դրաներումները հնարաւորինս պակասեն, որպէսզի ընտրական գործընթացները գոնէ ինչ-որ կերպ

համարժէք լինեն ժողովրդի ցանկութիւններին ու պատկերացումներին»,- լրագրողների հետ հանդիպման ասաց ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը: Ըստ նրա, Դաշնակցութիւնը միամիտ չէ եւ գտնում է, որ խորհրդարանական ընտրութիւններում հնարաւոր չէ բացառել այն երեւոյթները, որոնց իրենք ականատես են եղել նախորդ

ՆՇՈՒԵՑ 1999 ԹՈՒԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԼԻՑԸ

1999-ի Հոկտեմբերի 27-ին խորհրդարանի շէնքում կառավարութեան հետ հարցուպատասխանի ժամանակ տեղի ունեցած ահաբեկչութեան հետեւանքով սպանուեցին 8 պետական գործիչներ, այդ թւում՝ Ազգային ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանը, վարչապետ Վազգէն Սարգսեանը:

Իշխող Հանրապետական կուսակցութիւնը եւ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսը Եւրախորհուրդում կոմիտասի անուան պանթէոնում յարգանքի տուրք են մատուցում գոհերի յիշատակին:

Յիշատակման արարողութիւն է տեղի ունեցել նաեւ Ազգային ժողովի բակում՝ գոհուածների յիշատակը յաւերժացնող յուշակոթողի մօտ:

Արարողութեանը ներկայ էին Վազգէն Սարգսեանի մայրը՝ Գրեւտա Սարգսեանը, եղբայրը՝ Արմէն Սարգսեանը, Կարէն Դեմիրճեանի, միւս գոհերի այրիները:

«Ոճրագործութիւն, որ առաջին հերթին ոստիկան էր ոչ միայն պետական քաղաքական ակաւաւոր գործիչների կեանքի նկատմամբ, այլեւ՝ հարուած պետականութեան ողնաշարին: Ողբերգական իրադարձութիւնների հետեւանքով կորցրեցինք պետութեան ու ժողովրդի նուիրեալ զաւակներ, ովքեր իրենց ապրած կեանքով ու գործունէութեամբ ազնուօրէն ծառայեցին երկրին ու հասարակութեանը», - ասաց Յովիկ Աբրահամեանը՝ յաւելելով. - «Կա-

րէն Դեմիրճեանը, Վազգէն Սարգսեանը, Եուրի Բախշեանը, Ռուբէն Միրոյեանը, Միքայէլ Քոթանեանը, Արմենակ Արմենակեանը, Հենրիկ Աբրահամեանը, Լեոնարդ Պետրոսեանը մեր պետականութեան կայացման պատմութեան անբաժանելի մասն են»:

Ձոհուածների հարգատները 11 տարի անց էլ շարունակում են պնդել, որ յանցագործութիւնը բացայայտուած չէ:

«Առաջօր Վազգէնի բացակայութիւնը իմ, իմ ընտանիքի համար ակնյայտ ու բացարձակ է: Նոյնը նաեւ Վազգէնի բազմաթիւ ընկերների համար, բայց ոմանց համար էլ Վազգէնի կորուստը նոր դռներ բացեց՝ ներքին ցանկութիւններին, նիւթապաշտութեանը յազուրդ տալու հնարաւորութիւններ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ասաց Վազգէն Սարգսեանի եղբայրը՝ ընդդիմադիր «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեանը՝ յաւելելով. - «Միայն այն փաստը, որ այդ օրը գոհուեց ոչ միայն Վազգէնը, այլեւ Կարէն Դեմիրճեանը, Ազգային ժողովի մի շարք պատգամաւորներ ու նախարարներ, խօսում է այն մասին, որ ինդիքը ուղղուած չէր ինչ-որ մարդու դէմ. ինդիքը ուղղուած էր ուժ ներկայացնող համակարգի դէմ, եւ դրա համար էր նաեւ Կարէն Դեմիրճեանի ուղղակի նպատակային սպանութիւնը»:

ՏԻԳՐԱՆ ԽՁՄԱԼԵԱՆ.- «ՎԵՐՁԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿՈՒՄ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐ ԵՆ ԱԾՈՒԵԼ ԿԱԶԻՆՈՅԻ»

ՀՀ Ընտրական օրէնագրքում առաջարկուող փոփոխութիւնները հիմնականում վերաբերում են ընտրական յանձնաժողովների ձեւաւորմանը: Աժ ընդդիմադիր գործիչները գտնում են, որ ընտրութիւնների կազմակերպման ու անցկացման ողջ պատասխանատուութիւնը պէտք է կրի պետութիւնը: Այնինչ իշխող կոալիցիայի անդամների կարծիքով՝ այդ պատասխանատուութիւնը պէտք է կրեն կուսակցութիւնները:

Այս թեմայի շուրջ կինոսթիստը, «Սարգարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ Տիգրան Խզմալեանը HayNews.am-ի հետ գրոյցում նշեց.

«Իմ խորին համոզմամբ, վերջին տասնամեակում ընտրութիւնները վեր են ածուել կազինոյի. երբ մարդիկ մօտենում են քուէատուփին, կարծես մօտենում են «ռուլետային», իսկ այստեղ, բոլորս էլ գիտենք, յաղթել հնարաւոր չէ:

Ռեժիսորի խօսքերով՝ ընտրութիւնների միջոցով ինչ-որ բան փոխել հնարաւոր կը լինի միայն այն ժամանակ, «երբ դուրս գանք այս արատաւոր շրջանից, երբ գործում է ստալինեան ժամանակներից եկած սկզբունքը՝ կ'ընտրուի, ոչ թէ նա ում ընտրել են, այլ նա ում որոշել են»: Խզմալեանը յաւելեց. «Եթէ դուրս չգանք այս արատաւոր շրջանից, ոչինչ չի փոխուի: Այս



«Սարգարապատ» շարժման անդամ Տիգրան Խզմալեանը

ամէնը նման է փլուած շէնքում արուած «եւրոնեմոնտի: Ընտրական օրէնագրքում փոփոխութիւնները «թողփչոցի» են»:

Ինչ վերաբերում է արտահերթ ընտրութիւնների պահանջին, ապա Խզմալեանը կարծում է, որ «նման պահանջով հանդէս եկողները կամ չեն գիտակցում, որ դրանք ոչինչ չեն տալու, կամ գիտակցաբար խաբում են ժողովրդին»:

Խզմալեանը նշեց. «Լեւոն Տէր-Պետրոսեանն իր վերջին ճառում նշում էր, որ այս երկրում ընտրութիւնների միջոցով հնարաւոր չէ հասնել իշխանափոխութեան: Այսինքն՝ իրենք էլ սկսել են ընդունել այն, ինչ սկզբում մենք էինք ասում»:

ընտրութիւնների ժամանակ:

«Միշտ էլ ընտրութիւններից առաջ, եթէ գումարում ես բոլորի ակնկալած ձայները, մօտ 1000 տոկոսի է մօտենում: Ես լսել եմ նաեւ, որ կոալիցիան ասում է, մենք ունենք

80 տոկոս, մնացածը ընդդիմութիւնը թող իրար մէջ բաժանի: Սա նախ արհամարհանք է ժողովրդի հանդէպ: Դա նշանակում է, որ

# ԼՈՒՐԵՐ

## ՏԻԱՐԱՊԵՔԻՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՓՈԽՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ ԱՂՕԹԵԼ Է ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Թուրքիայի Տիարապեքիր քաղաքի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցում 30 տարի անց առաջին անգամ աղօթք է հնչել: Թուրքական Hurriyet-ի փոխանցմամբ՝ Ստամբուլից ժամանած Պոլսոյ Հայոց փոխպատրիարք Արամ Արք. Աթէշեանը, Տիարապեքիրի Ս. Կիրակոս եկեղեցու հիմնադրամի նախագահ Թեքին Փափուզեանը, գրող Մկրտիչ Մարկոսեանը, Տիարապեքիրի քաղաքապետ Օսման Բալդեմիրը եւ Թուրքիայի այլ վարչերից, Սիրիայից ու Եւրոպայից ժամանած բազմաթիւ հայերը աղօթել են դեռեւս վերանորոգման փուլում գտնուող Տիարապեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցում: Արամ Արք. Աթէշեանը նշել է, թէ յաջորդ տարի այս եկեղեցու բացումը Աղթամարի պէս մեծ հանդիսաւորութեամբ կիրականացուի եւ պատարագ կը մատուցուի:



Արամարքեպիսկոպոս Աթէշեանն ու կ'աղօթէ վերանորոգուած եկեղեցիէն ներս

«Աղթամարի Սուրբ Խաչի պէս այս եկեղեցին եւս հայերի համար կարեւոր է: Այն Միջին Արեւելքի ամենամեծ հայկական եկեղեցին է եւ ունի 1400 քմ աղօթատեղի: Այս եկեղեցու հետ կապուած մենք մի այլ կերպ ենք կարախ, քանի որ այն մեր ձեռքից չեն վերցրել, այն մեր եկեղեցին է: Յուսով եմ յաջորդ տարի այստեղ մեծ հանդիսաւորութեամբ պատարագ կիրականացնենք»-նշել է Պոլսոյ պատրիարքական ընդհանուր փոխանորդը: Հայերի հետ աղօթքին մասնակցած Տիարապեքիրի քուրդ քաղաքապետ

Օսման Բալդեմիրը նշել է, թէ «Դիարապեքիրը որքան մեր, այնքան էլ ձեր քաղաքն է»:  
 «Մեր մարզաբնակները տարբեր էլ լինեն, միեւնոյնն է, դուք իմ եղբայրներն էք: Խնդրում եմ, ընդունեք իմ եղբայրութիւնը: Ես պարզ եւ անկեղծ եմ ասում: Ձեր առաջ ես ինձ պարտական եմ գտում: Ես պարտք եմ ձեզ: Այս քաղաքը ինչքան որ իմն է, այնքան էլ ձերն է» նշել է Տիարապեքիրի քաղաքապետը՝ ընդծելով, որ Սուրբ Կիրակոսի բացումը կ'իրականացուի հայ եղբայրների հետ միասին եւ այդ հանդիպումները շարունակական կը լինեն:  
 Սուրբ Կիրակոս եկեղեցու վերանորոգման արժէքը կազմել է 2,5 միլիոն ամերիկեան դոլար. ծախսերի 70 տոկոսը հոգացել է հայկական համայնքը, իսկ 30 տոկոսը՝ Դիարապեքիրի քաղաքապետարանը: Արամ արքեպիսկոպոս Աթէշեանն աղօթքից յետոյ նշել է, որ ինքը ծնունդ է Դիարապեքիրում եւ հոգեւոր ծառայութիւն անցել այս եկեղեցում:

## ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐ.- «ՄԻ՛ ԿԵՐԱՆՈՐՈՂԵՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ»

Թուրք ազգայնականները շարունակում են իրենց խաւարամտութեան եւ անհանդուրժողականութեան շարքը: Այս անգամ էլ իր առաջնորդների կուրան է շարունակել ընդդիմադիր «Ազգայնական Շարժում» կուսակցութեան թուրքերիայի եւրոպական հատուածում գտնուող էդրինէի կառույցի փոխնախագահ Ջէքի Թոփուրը: Թուրքերիայի իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեանը «մեղադրելով» «եկեղեցապաշտութեան» մէջ՝ չմոռանալով եւս մէկ անգամ դէմ արտայայտուել Սուրբ Խաչի պատարագին:  
 Թուրքիայի «Անատոլու» պետական գործակալութեան փոխանցմամբ՝ Ջէքի Թոփուրը նշել է, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերանորոգումը եւ պատարագը «սխալ էր», քանի որ «Երեւանում չկայ թուրքական եւ ոչ մի մզկիթ, իսկ Բալկաններում շարունակում է «թուրքական կոթողների» ոչնչացումը»:  
 «Երբ մենք նամազ էինք անում Ֆեթհիյէ մզկիթում (թուրքերի կողմից պղծուած Անիի Մայր Տաճարում), վարպետ Թալիփ Էրդողանն ու իր կուսակցից ընկերները խաչ էին տեղադրում Աղթամարի եկեղեցու գմբէթին: Մի՞թէ նրան գէթ մի գրամ ամօթ չունեն»,-իւր եւ

իր կուսակցական ընկերների հոգուող ստորութիւնն է ցուցադրել թուրք ազգայնականը: Թոփուրը չի կարողացել մարտել նաեւ հայկական եկեղեցու վրայ արուած ծախսերը, որոնք նա «չափից աւելի շատ է» համարել:  
 Վերջինս չի սահմանափակուել այսքանով եւ շարունակել է իր ցնդաբանութիւնների շարքը՝ կոչ անելով չվերանորոգել թուրքերիայի տարածքում գտնուող քրիստոնէական մի շարք կոթողներ:  
 «Ազգայնական շարժում» կուսակցութիւնը (Milliyeti Hareket Partisi կամ MHP) ազգայնական հայեցքներով աջակցեցին կուսակցութիւնն է: Հանդիսանում է թուրքերիայի երեք խոշորագոյն կուսակցութիւններից մէկը: Հիմնադրուել է 1969 թուականին Արփարսլան Թիւրքէշի կողմից: 1997 թուականից կուսակցութեան նախագահն է Դեւլեթ Բահչեւիլին: Թուրքերիայի խորհրդարանում ունի 71 պատգամաւորական մանդատ: Կուսակցութիւնը «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութիւնից յետոյ ընդդիմադիր երկրորդ ուժն է: Այս կուսակցութիւնը յայտնի է իր հայատեսութեամբ, իսկ «Գորշ գայլեր» ահաբեկչական կազմակերպութիւնն ուղիղ կապ ունի կուսակցութեան հետ:  
 HayNews.am

## FBI-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՆ

Օրերս ԱՄՆ-ում բացայայտուած գեղծարարութիւնների քրէական գործով անհրաժեշտութիւն առաջանալու դէպքում Միացեալ Նահանգները կը դիմի Հայաստանին: Հայաստանի գլխաւոր դատախազի հետ հանդիպման ժամանակ այդ մասին ասել են ԱՄՆ-ի Հետաքննութիւնների Դաշնային Բիւրոյի (ՀԴԲ) ներկայացուցիչները: Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպանատան մշտական իրաւական խորհրդատու Սթիւ Բեսլերը, Հետաքննութեան Դաշնային Բիւրոյի իրաւական հարցերով կցորդ Քեւին Դոնովանը, Հետաքննութեան դաշնային բիւրոյի տարածաշրջանային անվտանգութեան պատասխանատու Լանս Լեւեքլին Հայաստանի գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանի հետ հանդիպմանը, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց գլխաւոր դատախազութեան մամուլի խօսնակ Սոնա Տոուզեանը, պաշտօնապէս տեղեկացրել են վերջերս Միացեալ Նահանգների իրաւապահ

մարմինների կողմից բանկային եւ առողջապահական ապահովագրութեան (Medicare) ոլորտում բացայայտուած գեղծարարութիւնների փաստով յարուցուած քրէական գործի մասին, որով որպէս մեղադրեալներ ներգրաւուած են նաեւ ազգութեամբ հայեր:  
 Հարցին, թէ արդեօ՞ք ամերիկացի իրաւապահները տեղեկացրել են, թէ ձերբակալուածներից քանիսն են Հայաստանի քաղաքացիներ, Սոնա Տոուզեանը պատասխանեց.- «Իրենք չեն կարող ստույգ տեղեկութիւններ տրամադրել, եւ մեր խնդրանքով խոստացել են ճշդել եւ յաւելեալ տեղեկատուութիւն տրամադրել»:  
 Սոնա Տոուզեանը գրոյցի ընթացքում նաեւ փոխանցեց, որ Դաշնային Բիւրոյի ներկայացուցիչները, տեղեկ լինելով հայաստանեան մամուլի այն հրապարակումներին, թէ Հայաստան են ժամանել Դաշնային Բիւրոյի մէկ տասնեակից աւելի գործակալներ, կտրականապէս հերքել են դա:

## ՀԱՅ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԿԱՆՂԱԼ ԹԵՐԱՆՈՒՄ

Հոկտեմբեր 24-ին Թեհրանում մամուլի եւ գանգուածային լրատուամիջոցների փառատօնի մեկնարկից յետոյ հայերն ու աղբբեջանցիները ներքաշուել են սկանդալի մէջ:  
 APA լրատուական գործակալութեան փոխանցմամբ, հայերը դահլիճ են բերել Լեռնային Ղարաբաղի քարտէզը, յուշարձանների նկարները եւ, ինչպէս գործակալութիւնն է չակերտներում գրում, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դրօշը»:  
 Աղբբեջանցիները առարկել եւ հայ լրագրողներից պահանջել են անմիջապէս դուրս հանել դրանք: Հայերը պահանջը մերժել են, ինչից յետոյ աղբբեջանցիները բողոքով դիմել են միջոցառման կազմակերպիչ իրանցիներին:  
 Հայ լրագրողներն ասել են, թէ Լեռնային Ղարաբաղի պատմութեանը վերաբերող նկարները եւ Արցախի խորհրդանիշ «Մենք եւ մեր սարերը» յայտնի յուշարձանի պատկերը հենց կազմակերպիչներն են փակցրել: «Ուստի, մենք մտածեցինք, որ կարող ենք նաեւ Լեռնային Ղարաբաղի քարտէզն ու դրօշը տեղադրել», ասել են հայերը:

Իրանցի-կազմակերպիչներն, իրենց հերթին, ասել են, թէ բոլոր նկարներն ու ցուցադրման համար նախատեսուած այլ նիւթերը հայկական կողմն է տրամադրել եւ նոյնպէս պահանջել են հայերից հանել այդ նկարները: Ծագած վէճի ընթացքում աղբբեջանցի լրագրողներից մէկը հայերի տաղաւարից պոկել է Լեռնային Ղարաբաղի դրօշը:  
 Աղբբեջանցիներին օգնութեան են եկել թուրք լրագրողները եւ սպառնացել աղբբեջանցի իրենց գործընկերների հետ լքել փառատօն-ցուցահանդէսը, եթէ հայերը չկատարեն կազմակերպիչների պահանջը:  
 Մամուլի եւ գանգուածային լրատուամիջոցների 17-րդ միջազգային փառատօն-ցուցահանդէսը Իրանի մշակույթի նախարարութիւնն է կազմակերպել: Փոխնախարար Մոհամադ-Ալի Ռամինը ասել է, որ Իրանն այս տարի ներկայացնում է 700 տաղաւար եւ 2400 լրագրող, արտասահմանից այս միջոցառմանը մասնակցում է 55 երկիր ներկայացնող 250 լրագրող 175 լրատուամիջոցներից:

## «ԱՂԲԵՋԱՆՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՍԵՆԱԲԱՐԲԱՐՈՍ ԵՐԿԻՐՆ Է»

Հայաստանի հարեւաններից միայն Իրանն է, որ հայկական յուշարձաններին մեծ ուշադրութեամբ եւ յարգանքով է վերաբերում: Այսպիսի տեսակէտ յայտնեց ՀՀ մշակույթի նախարարութեանն առնթեր պատմամշակութային ժառանգութեան գիտահետազոտական կենտրոնի տնօրէն, հնագէտ Յակոբ Սիմոնեանը:  
 Որպէս օրինակ նա բերեց Իրանի տարածքում գտնուող Սուրբ Թադէի վանքը, որը լաւ վիճակում է: Սիմոնեանը յաւելեց, որ հայկական յուշարձաններ, մասնաւորապէս, վանքեր, այցելում են նոյնիսկ տեղի մահմեդականները: Վրաստանն այլ մօտեցում է ցուցաբերում. այն վարում է հայ եկեղեցիների վրացականացման քաղաքականութիւն: Սիմոնեանը տեղեկացրեց, որ

այս հարցը բազմիցս քննարկուել է վրացի գործընկերների հետ, ովքեր խոստանում են լուծել առկայ խնդիրները: Նա յիշեցրեց, որ Մուղնու Սուրբ Գէորգ եկեղեցու վերականգման նախագիծը համարեաւ ամբողջութեամբ պատրաստ է:  
 Անդրադառնալով Աղբբեջանին՝ նա ասաց. «Աղբբեջանն ամբողջ աշխարհում ամենաբարբարոս երկիրն է: Աղբբեջանցիները գենետիկորէն ատելութեամբ են լցուած այն ամէնի նկատմամբ, ինչը հայկական է», - ասաց նա՝ նշելով, որ այս ամէնը պետական քաղաքականութիւն է:  
 Սիմոնեանը նշեց, որ ոչ ոք չգիտի՝ Աղբբեջանի տարածքում նախկինում գործող հայկական յուշարձաններից գոնէ մէկը պահպանուե՞լ է, թէ ոչ:

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԴԱՄ. ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱԻԵՐԻՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԻԻ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



Քալիֆորնիայում գտնուող «Համաշխարհային ժառանգութեան հիմնադրամ»-ը ներկայացրել է վտանգի տակ գտնուող մշակութային արժեքները, որոնց մէջ էլ յայտնուել թուրքիայի տարածքում գտնուող հայկական պատմական Անի քաղաքը:

Թրքական Radikal-ի փոխանցմամբ՝ «Համաշխարհային ժառանգութեան հիմնադրամ»-ը իր «Պահպանել մեր կորցրած ժառանգությունը» անունով գեկոյցի մէջ ընդգրկած 12 յուշարձանա-մշակութային կենտրոնների մէջ ներառած եւ թուրքիայի տարածքում գտնուող 10-11-րդ դարերում Հայաստանի մայրաքաղաք հանդիսացած Անիի յուշարձանների պահպանութեան հետ կապուած լուրջ մտահոգութիւններ է ներկայացնում: Ըստ որի՝ 10-11-րդ դարում Հայաստանի մայրաքաղաք Անին՝ հայկական քաղաքակրթութեան անգուղական արժէք է: «Անիի աւերակների մէջ ամենատպաւորիչ եկեղեցու՝ 1001-ին կառուցուած Անիի մայր տաճարի ոճը մէկ հարիւրամեակ յետոյ կրկնօրինակեցին Եւրոպայում: Այժմ անհրաժեշտ է աշխատանքներ սկսել կանգնեցնելու Անիի աւերումը եւ պահպանութեան տակ առնել այն»-նշուել է գեկոյցում:

Անիին նուիրուած 2 էջանոց գեկոյցում նշուել է, որ Անին անբաւարար հոգածութեան պատճառով կանգնել է ոչնչացման վտանգի առաջ, քանի որ վերանորոգման անուան տակ ենթարկուած է մի շարք բացասական նախաձեռնութիւնների:

### «BENTLEY»-ՆԵՐՈՇԻ «MAYBACH»-ՆԵՐՈՇԻ ԹԱՔՑՐԵԼ ԵՆ

Արդէն քանի օր է մայրաքաղաքի փողոցներում չես տեսնի վերջին տարիներին շատ յաճախ հանդիպող թանկարժէք «Bentley» եւ «Maybach» մակնիշի աւտոմեքենաներ: Այն մարդիկ, որոնք մինչեւ վերջերս «Թիթիզանում» ու գլուխ էին գովում, որ նման մեքենայ են վարում, այս օրերին ստիպուած են իրենց «Bentley»-ները եւ «Maybach»-ները թաքցնել: «Առաւօտ»ի տեղեկութիւններով, այս մակնիշի աւտոմեքենաները անմիջական կապ ունեն օրերս ամերիկեան յատուկ ծառայութիւնների կողմից ձեռքարկուած հայկական մաֆիայի աղմկայարոյց գործի հետ, որի պարագլուխներից է Հայաստանից ԱՄՆ արտագաղթած «Պզօ» մականունով օրէնքով գողը: Ըստ որոշ լուրերի, այս յանցաւոր խմբի գործունէութեան, այսպէս ասած, բիզնէսի հիմնական ճիւղերից մէկը եղել է վաճառքի նպատակով ամերիկեան աւտոմեքենաների ներկրումը մեր երկիր: Այն օրից ի վեր, ինչ լուրեր են տարածուել, որ յանցագործութեան մանրամասները բացայայտելու նպատակով Հայաստան է ժամանել ԱՄՆ-ի յատուկ ծառայութեան մի խումբ, նշեալ մակնիշի աւտոմեքենաների տէրերը խուճապի մէջ են: Նրանց տարբեր «կանաչներով» զգուշացուել է միառժամանակ աւտոմեքենաները «մեղրան» չհանել:

### ՀՅԴ-Ն ՅՈՅՍ ՈՒՆԻ

#### Շարունակուած էջ 3-էն

արդէն նախապէս որոշել են, թէ ով ինչքան ձայն է ստանալու եւ ժողովրդին, որպէս ընտրութիւնների մասնակցութիւն ունեցող գործօն, բացառում են»,- ասաց Արմէն Ռուստամեանը:

Բանախօսը նշեց, որ ՀՅԴ հիմնական նպատակը երկրում իշխանափոխութեան հասնելն է եւ նոր որակով իշխանութիւններ ձեւաւորելը:

«Մեր յոյսն այն է, որ այն, ինչ չյաջողուի խորհրդարանական ընտրութիւններում, կը յաջողուի ստանալ նախագահական ընտրութիւններում», - նշեց նա:

Ռուստամեանի կարծիքով, Հայաստանում ընտրական գործընթացները այնքան արատաւորուած են, որ քուէատուփում առկայ քուէրաթերթիկների քանակը բացարձակապէս կապ չունի տուեալ քաղաքական ուժի ունեցած իրական վարկանիշի հետ:

### ԼԻԲԱՆԱՆ

#### ՈՒՄԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԼԻԲԱՆԱՆ Կ'ԱՅՑԵԼԷ

Յառաջիկայ օրերուն Միջին Արեւելքի կարգ մը երկիրները պիտի այցելէ Ռուսիոյ Դաշնութեան արտաքին գործոց նախարար Սէրգէյ Լավրովը: Իր այս այցելութիւններու ծիրին մաս կը կազմէ նաեւ Լիբանանը: Մայրիներու երկրին տալիք իր այցելութիւնը Պէյրութ կը նախատեսուի Նոյեմբերի 4-5ի շրջանին: Ան պիտի այցելէ նաեւ Պաղեստին, Իսրայէլ, Սուրիա եւ Յորդանան:

#### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ՊԸՐԻ ՓԱՐԻՁԻ ՄԷՋ

Լիբանանեան Խորհրդարանի նախագահ Նապիհ Պըրրի պաշտօնական այցելութեամբ մը Ֆրանսա մեկնեցաւ: Ան Փարիզի մէջ հանդիպում մը պիտի ունենայ Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզիի հետ, քննարկելու համար Լիբանանի իրավիճակը: Խորհրդարանի նախագահը յայտարարեց թէ կառավարութիւնը բաւական վճռական շաբաթ մը պիտի բոլոր կեղծ վկայութիւններ կատարողներու թղթածրարի կապակցութեամբ: Պըրրի դիտել տուաւ թէ Ռաֆիք Հարիրիի սպանութեան վերաբերող թղթածրարն այլեւս անհնար է յետաձգել: Ան միաժամանակ այն տպաւորութիւնն արտայայտեց որ կեղծ վկայութիւն կատարողներու թղթածրարին շուրջ անկարելի պիտի ըլլայ գոյացնել միջին լուծում մը: Պըրրի այս կապակցութեամբ յայտնեց թէ արգելք մը չի տեսներ եթէ հարցը վճռուի քուէարկութեան միջոցաւ պայմանաւ որ բոլորն ալ ստանձնեն իրենց պատասխանատուութիւնը:

#### ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԸ ՄՏԱՅՈԳ Է ԼԻԲԱՆԱՆԻ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ

Ֆրանսական Ա. Էֆ. Փէ. մամլոյ գործակալութեան համաձայն՝ Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Պաշշար էլ Ասատ «Ալ Հայաթ» օրաթերթին յայտնած է թէ Սուրիա շատ մտահոգ է Լիբանանի ապահովութեան հարցով քանի որ քաղաքական կացութիւնը շատ վատ է: «Որեւէ մէկ պահուն բախում մը կրնայ Լիբանանը կործանել: Մենք ներկայիս կ'աշխատինք որ նման բան մը չի պատահի»: Ասատ յայտնեց նաեւ որ իր դռները բաց են Ռաֆիք Հարիրիի գաւակին համար եւ աւելցուց «Մենք կը հաւատանք որ Սաստ Հարիրին կրնայ յաղթահարել ներկայի խոչընդոտները: Ինք այն անձն է որ ի վիճակի է օգնելու Լիբանանին, դուրս հանելու զայն այս տագնապէն»:

### ԿՈՉ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Հայրենակիցներ,

Հայաստանի անկախութեամբ ցնծաց և ուրախացաւ հայ ժողովուրդը, քանզի երկար դարեր կաշկանդումից յետոյ, հնարաւորութիւն ունեցաւ ապրելու ազատ և տնօրինելու իր քաղաքակրթութիւնը: Սակայն բոլոր ձեռնարկներին համընթաց ահաւոր երկրաշարժը, Արցախեան ազատամարտը և արտադրական կառոյցների ոչնչացումը մեր ժողովրդին մատնեցին ծանր կացութեան, որի հետեւանով ունեցանք բազմաազգային որբեր, հաշմանդամ երեխաներ, կարիքաւոր ընտանիքներ և անտուն, անպաշտպան մանուկներ: Այդ ցաւալի և անցանկալի կացութիւնը միեւնոյն օրինակ է մի քանի քարեմիտ ու հայրենասէր ընկերների - կեանքի կոչելու «Հայաստանի ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների օգնութեան ֆոնդը», որն ահա 11 տարի լծած է բարեխիղճական գործին և պաշտօնապէս անցաւ ծնողագուրդի և հասարակութեան մարմին պետութեան կողմից: Մեր 11-ամեայ շինարարական և բարեգործական աշխատանքները պարզ են և տեսանելի: «Քաջ Նազար» երգիծաբարբում և նոյնանուն հեռուստաժրագրի Կիրակնօրեայ երկուսկէս ժամեայ հաղորդման ընթացքում, մեմֆերկայացնում ենք թէ ի՞նչ են լինում մեզ յանձնուած գումարները: Բանկային մեր հաշիւները բաց են բոլորի առջեւ: Իւրաքանչիւր հայ կարող է գնալ և տեսնել հաշուեցոյցները: 11-տարիների ընթացքում մամուլի մեքենաներ ենք տեսնում, համերգներ կազմակերպել 150,000 հայ մանուկների համար՝ երևանում, Հայաստանի տարբեր գիւղերում և Արցախում: Ուրախ ենք և հպարտ առ այն, որ մեր ժողովուրդը վստահում է մեզ և ժողովրդի վստահութիւնը միակ երաշխիքն է մեր յաջողութիւնների: Հիմնականօրէն նորագոյն ենք կառուցում: Նմաբաններ ենք կառուցել Սպիտակի մանկատան համար, նորագոյն բաղնիքներ, գուգարաններ և լուսագատուներ:

Միքիլիներ, պահանջը ծով է, իսկ մեր հնարաւորութիւնը՝ սահմանափակ: Ամէն օր Հայաստանի գանազան մանկատներից, դպրոցներից և չհաւոր ընտանիքներից ստանում ենք մանկաներ, լսում ենք հեռախօսազանգեր, որոնք օգնութիւն են աղերսում...

Մեր բախանցիկ գործունէութիւնը պատճառ է դառնում, որ մեր բարեբար և վեհոգի գործակիցների աշխատանքները պսակւեն յաջողութեամբ, որովհետեւ, ինչպէս նշեցիք, մեր վեհոգի ժողովուրդը հաւատով է ընծայում մեզ և վստահ գիտէ, որ իր տուած լուսման հասնում է իր նպատակին:

Միւսարարական մեր նոր ծրագրերին սա-տարելու համար թեւ ու թիկունք կանգնեցէք մեզ և կատարէք ձեր հայրենասիրական-մարդասիրական պարտականութիւնը, մէկ անգամ եւս խոնոներամ մասնակցելով այս Կիրակի, Հոկտ. 31, 2010-ի դրամահաւաքին, AMGA 380, AABC 384 կայաններից, նախընտրելով ժամը 4-ից մինչեւ կէս-գիշերուայ ժամը 12.00-ը:

**Հայաստանի ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների ֆոնդի նախագահ՝ Յովհաննէս Բալայեան**

Ուշադրութիւն.- Նախքան Հոկտ. 31, 2010 ստացուած բոլոր նուիրատուութիւնները անուանապէս կը յայտարարուի գալիքի երեքուրեք ընթացքում:

**ՄԱՍԻՍ**  
ԱՄԵՆԱՎՍԱՎԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

### «ԿՈՎԿԱՍԸ. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ»

ԱՐՄԷՆ ՔԼՈՅԵԱՆ

Սեւ եւ Կասպից ծովերի միջեւ գտնուող գեղեցիկ, լեռնային, բարեբեր տարածքում շատ յաճախ են կուռել: Վերջին անգամ՝ 2008 թուականի Օգոստոսին պատերազմել են Ռուսաստանն ու Վրաստանը: Եւ դա անակնկալ էր, լարուածութիւնը Ռուսաստանի կողմից աջակցութիւն ստացող Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի շուրջ ամիսներ շարունակ է աճել:

Անդրադառնալով թոմաս Դէ Վաալի նոր գրքին՝ «Էկոնոմիստ» հանդէսը նշում է, որ հեղինակի համոզմամբ, Կովկասում բոլոր պատերազմներն անցելի են ներկայի համար են, եւ հասկանալու համար այդ տարածաշրջանն անհրաժեշտ է դրա պատմութիւնն իմանալ:

Նախկինում լրագրող թոմաս Դէ Վաալն այժմ Ուաշինգթոնում աշխատում է Միջազգային խաղաղութեան Քարնեգիի հիմնադրամում, նա տարածաշրջանի, յատկապէս Ատրպէյճանի եւ Հայաստանի, ինչպէս նաեւ Չեչնիայի հարցերով փորձագէտ է, մի շարք գրքերի հեղինակ:

«Էկոնոմիստ»-ն ասիտանքով է նշում, որ նոր գրքում հեղինակը չի արծարծել Ռուսաստանի առաւել անկայուն եւ վտանգաւոր շրջանի՝ Չեչնիայի խնդիրը:


Նա համառօտ ներկայացրել է տարածքի պատմութիւնը, բայց նոյնիսկ այդ սեղմ ձեւաչափում կարողացել է փոխանցել մի քանի չափազանց ուշագրաւ հանգամանքներ, օրինակ, այն, որ Կովկասում է աշխարհում լեզուների ամենաբարձր խտութիւնը եւ որ 1900 թուականին աշխարհում Ատրպէյճանն էր առաջինը նախադիւնահանողների շարքում:

Սակայն պատմութիւնն իրական զարգացում է ստացել այն ժամանակ, երբ Ռուսաստանում 1917 թուականի յեղափոխութեան հետեւանքով հարակովկասեան երեք երկրները ձեռք են բերել անկախութիւն, որ երկար չի տեւել: Վերջին զարգացումների համատեքստում մեծ հետաքրքրութեամբ են ընթերցում այն մասին, որ 1918 թուականին մենշեւիկեան Վրաստանը դաժան պատերազմ է մղել՝ Աբխազիան կլանելու համար:

Ի վերջոյ, Կարմիր բանակը հսկողութիւն է սահմանել այդ երեք երկրների նկատմամբ եւ դրանք դարձել են Խորհրդային միութեան մասը: Այն, որ Ստալինը վրացի էր, որեւէ կերպ տարածաշրջանը վայրագութիւններից չի փրկել: Միաժամանակ, հեղինակը նշել է, որ խորհրդային կարգը ոչ բոլոր առումներով էր բացասական Կովկասի համար, որը հիմնականում խուսափել է Երկրորդ աշխարհամարտի աւերներից եւ յետագայում դարձել խորհրդային վերնախաւի հանգստի սիրուած վայրը:

Զարմանալի գուզադիպութեամբ, Ռուսաստանի բոլոր երեք վերջին արագորձնախարարները առնչութիւն ունեն վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի հետ: Թոմաս Դէ Վաալը նշել է, որ ներկայիս նախարար Սերգէյ Լաւրովի մայրը ազգութեամբ հայ է Թբիլիսիից:

Թոմաս Դէ Վաալի փոխանցմամբ, Խորհրդային Միութեան փլուզումն է հանգեցրել այսօրուայ խնդիրների մեծ մասը: Ազգայնամոլութեան բռնկումը, որին նպաստել է մտաւորականութեան մի հատուածը, պատերազմի է հան-



գեցրել վրաստանի ներսում եւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ:

Դրա այսօրուայ արդիւնքը Աբխազիայի, Հարաւային Օսիայի եւ Լեռնային Ղարաբաղի «սառեցուած հակամարտութիւններն» են: «Էկոնոմիստ»-ը նշում է, որ Դէ Վաալը արդարացիօրէն չի հաւանում «սառեցուած հակամարտութիւն» տերմինը, որովհետեւ Ղարաբաղի շփման գծում շարունակ գինուորներ են գոհուում, իսկ 2008 թուականի պատերազմն էլ վկայում է, թէ որքան արագ է «սառեցուած հակամարտութիւնը» հասնում եւսման կէտին:

Հանդէսը նշում է, որ թոմաս Դէ Վաալի այս գրքի ընթերցումից հանգում ես մի կարեւոր եզրակացութեան՝ Արեւմուտքի անտարբերութեան մասին: Այն դրսեւորուել է 90-ականներին, երբ Ռուսաստանը հրադարարը հսկելու եւ խաղաղապահներ ուղարկելու ազատութիւն է նուաճել, թէպէտ ակնյայտօրէն հանդիսացել է շահագրգիռ կողմ:

Դրանից տասը տարի անց Արեւմուտքը ոգեւորուել է Միխեիլ Սահակաշվիլիի «վարդերի յեղափոխութեամբ» եւ խօսել ՆԱՏՕ-ին վրաստանի անդամակցութեան հնարաւորութեան մասին, սակայն օգնութեան չի եկել Սահակաշվիլին, երբ վերջինս չափն անցել ու 2008-ի աղէտալի պատերազմն է հրահրել:

ՆԱՏՕ-ին անդամակցելու մասին խօսակցութիւններն աւարտուել են, իսկ Բրիւսելում ոչ ոք չի խօսում Եւրամիութեանն այդ երեք երկրների անդամակցելու հեռանկարի մասին:

Թերեւս լաւագոյն դասը, որ երեք երկրները կարող են քաղել, այն է, որ դրսից աջակցութիւն եւ միջամտութիւն ակնկալելու փոխարէն հարկ է հայեացքը ներս ուղղել եւ սեփական ուժերով սեփական կարիքները հոգալ:

Ի դէպ, «Էկոնոմիստ»-ը նշում է, որ թոմաս Դէ Վաալը որոշ չափով օբիեկտիւ չէ Սահակաշվիլիի վերաբերեալ. այո, ինչպէս պատերազմի ընթացքը վկայեց՝ նա չափից դուրս կամակոր է եւ հեղինակապաշտ, բայց դրա հետ մէկտեղ նա կարողանում է արդիականացնել եւ բարեփոխել վրաստանը, ձերբազատուելով խորհրդային ժառանգութեան մնացորդներից:

Ապա «Էկոնոմիստ»-ը գրում է. - «Եթէ Հայաստանը եւ Ատրպէյճանը կարողանան հետեւել վրաստանի օրինակին, Կովկասը կը բարգաւաճի, ինչը, վստահաբար, կոնֆլիկտները լուծելու լաւագոյն ուղին է»:

### ԵՐԿՏՈՂ «ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ԴԵՐՈՍԱՄԱՐՏԵՆ ԿԱՐՍԻ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆ, ԱՐՑԱԽԵԱՆ ԴԵՐՈՍԱՄԱՐՏԵՆ...» ՅՕԴՈՒԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Ծ. Խ. «Մասիս»ի Հոկտեմբեր 2, 2010 թիւով լոյս տեսած Յարութ Տեր Դաւիթեանի «Սարտարապատի Դերոսամարտէն Կարսի Խայտառակութիւն, Արցախեան Դերոսամարտէն...» յօդուածին կցուած խմբագրական մեր Ծօթով կը հրաւիրէիք մեր ընթերցողները աւելի լայն քննարկման նիւթ դարձնելու իրենց արտայայտուած մտքերը: Ստորեւ կը հրատարակենք Փրոֆ. Հայր Լեւոն Զեքիեանի երկտողը այդ կապակցութեամբ:

#### Սիրելի Յարութ

Թէեւ ցանցաւ կը թղթակցինք, բայց միշտ հաճելի է քեզ լսել: Մտահոգութիւններդ կը կիսեմ: Մանաւանդ Հայաստանի վիճակը յաճախ սրտաճմլիկ է, այնքան աւելի որ Մայր ոստանն է: Կը խորհիմ աւելի խոր անդրադառնալ այս եւ նման հարցերու շուրջ:

Իսկ գրածներուդ մասին, միայն մէկ նկատողութիւն կ'ուզէի ընել այսօր: Բայրոնին կը վերաբերի: Իմ կարծիքով, մենք անոր կապը հայութեան հետ քիչ մը շատ մեծցուցած ենք: Ռոմանտիկ մըն էր ինքը, սիրահարուծ էր սկզբնապէս Միխիթարեան Հայրերուն եւ անոնց միջոցով ու շնորհիւ հայ մշակոյթին, բայց առանց հրաժարելու իր հիմնականում ռոմանտիկ մերձեցումներէն, քիչ թէ շատ իր կեանքի բազում սիրարկածներուն պէս:

Հայերէն իր յուսախաբութիւնը, պարզապէս, Միխիթարեաններէ յուսախաբութիւն էր, որոնց հանդէպ իր առջիննիկ սէրը վերածուած է այնուհետեւ արհամարհանքի եւ լուսանքի: Ինչո՞ւ, սակայն, այդ յուսախաբութիւնը:

Ինք կ'ուզէր որ Միխիթարեանները հայ ժողովուրդը Օսմանցիին դէմ ապստամբութեան գրգռէին, ինչ որ Հայրերը բացայայտօրէն մերժեցին ընել, զայն նկատելով, միջազգային պատմաքաղաքական

տուեալ իրադրութեան մէջ, արկածախնդրութիւն՝ գուրկ դրական հաւանականութեան որեւէ լուրջ երաշխիքէ: Այն ինչ որ մեր Բանաստեղծին թախծոտ զգայնութեան պիտի թուէր գիշեր անծայր եւ ուղի անյայտ...:

Կարծեմ թէ այս դրուագը ցոյց կու տայ պարզապէս մէկ բան այդ ժամանակներու Միխիթարեան Հայրերուն քաղաքական սուր հասողութիւնը, որոնք շատ աւելի լաւ ու խոր ըմբռնած էին Նորին Վսեմաշուք Տէրութեան քաղաքականութեան ուղին ու ծուծը բան նոյնինքն գտարիւն բրիտանացի Բայրոնը: Միխիթարեանները շատ լաւ հասկացեր էին արդէն, ինչ որ այնքան կիւնիկօրէն (cynically) պիտի բանաձեւուէր յետոյ որպէս բրիտանական դիւանագիտութեան կողմնորոշիչ վարդապետութիւն՝ թէ բրիտանական նաւերը չէին կրնար Արարատի գագաթը մագլցել: Այս մէկն էր գոր Բայրոնն էր հասկցած ու դժուար էր որ հասկնար իր կրակոտ ու փոթորկոտ ռոմանտիզմով:

Ուստի, ես պիտի խուսափէի Բայրոնի Միխիթարեաններէն յուսախաբութիւնը քու վերլուծած համագրիդ մէջ ներառնել:

Ձերմ ողջունիւ ու լաւագոյն իղձերով՝ քոյգ  
Հ. Լեւոն

*Զմեքնային*  
**ԽՐԱԽԱՃԱՆՔ**  
*tu*  
**ՉՈՒԿԿԵՐՈՅԹ**

Կազմակերպութեամբ՝  
**ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ**  
**ՄԱՍՆԱԾԻՒՂԻ**

**Շաբաթ, 30 Հոկտեմբեր 2010**  
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91104

  
Տոմսերու համար դիմել՝  
**(626) 797-7680**


# «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՕԶՆԵՑԻԻ (8-ՐԴ ԴԱՐ)

ԿԱԶՄԵՑ ԴՈԿՏ. ԿԱԶԳԵՆ ՅԱԿՈԲԵԱՆ ՀԱՏՈՐ Ա ԵՒ Բ ԵՐԵՒԱՆ 1964, 1971

ԴՈԿՏ. Տ. ԶԱԻԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆՆԵԱՆ

## Ներածական

«Կանոնագիրք Հայոց» կոչումը հատորը մեզի հասած է Յովհաննէս Կաթողիկոս Օձնեցի Հայրապետէն (717-728) որ 8-րդ դարուն հաւաքեց նախորդ դարերու եկեղեցական ժողովներէն աւանդուած եկեղեցական կանոնները եւ զանոնք դասաւորելով հաստատեց Դուինի իր Կաթողիկոսարանին մէջ որպէս օրինագիրք Հայ Եկեղեցւոյ: Անփոխարինելի ժառանգ մըն է Հայոց Հայրապետին թողած աւանդը որ մեր եկեղեցական եւ ազգային պատմութեան մէջ կարեւորագոյն հանգրուան մը կազմեց իր հեղինակած աստուածաբանական եւ ջատագովական կարեւոր երկերու շարքին:



Ի յայտ բերած ընդամէնը 1332 կանոններ, բաղդատելով եւ տարընթեցումները արձանագրելով յիշեալ 47 ձեռագիր օրինակներէն:

Տասներորդ դարու վերջը «Կանոնագիրք»ը 40-ի մօտ նոր կանոնախումբերու յաւելում կրած էր արդէն: Մինչեւ Օձնեցի Հայրապետ 24 կանոնախումբեր դասաւորուած էին, եւ յետոյ աւելցան միւսները: «Կանոնագիրք»էն գատ Հայ Եկեղեցին ունեցած է երկու ակնաւոր կանոնագիրքեր եւս, մին ծանօթ որպէս 12-րդ դարու Մխիթար Գօշ վարդապետի Դատաստանագիրքը, եւ միւսը՝ 13-րդ դարու Սմբատ Գունդատապի կանոնագիրքը, որոնք սակայն օրինական չեն նկատուած, հակառակ անոնց շատ կարեւոր բովանդակութեան, մասնաւորաբար առաջինի պարագային, քանի որ անոնք ժողովական որոշումներէ չեն բխած, այլ միայն անձնական ձեռնարկներ որոնք յետագային օգտագործուած են հայ իրաւունքի մասին կատարուած ուսումնասիրութեանց աւելցումով:

## Բովանդակութիւնը

Օձնեցի Հայրապետի «Կանոնագիրք»ի բովանդակութիւնը հիմնապէս հայ եկեղեցւոյ վարդապետութեան եւ պաշտամունքին կը վերաբերի, մասնաւորելով նաեւ կանոններ հոգեւորականներու վարք ու բարքի մասին: Հոն կան նաեւ ամուսնական, ընտանեկան կեանքի վերաբերեալ հիմնական օրէնքներ: Անշուշտ ակներեւ կը դառնայ միշտ օրուան քաղաքական կացութեան դէմ յանդիման Հայ Եկեղեցւոյ որդեգրելիք դիրքն ու ինքնապաշտ-

պանութիւնը: Նոյնը կարելի է ըսել նաեւ յունադաւան քարոզչութեան յարատեւ ճնշումներու մասին որոնք կուգային Բիւզանդական կայսրութենէն: Քաղաքական կացութեանց բերումով Արաբական արշաւանքները եօթներորդ դարուն եկան աւելի բարդացնելու արաբ-բիւզանդական առճակատումը որուն միջեւ կուռախնձոր կը դառնար միշտ Հայաստան, երբ մանաւանդ արաբներ քրիստոնէական կրօնքի հասարակաց գիծը տեսնելով յունաց եւ հայոց միջեւ, կը բռնադատէին հայերը իրենց կապը իսլամի Բիւզանդիոնի հետ, ինչպէս նաեւ Բիւզանդիոն, նոյն նկատումներով, կ'ուզէր զօրացնել կայսրութեան արեւելեան նահանգները, նուաստացնելով Հայաստանը, դիմադրելու համար արաբական յանկարծական եւ բռնի յարձակումներուն:

Կանոնները պաշտպան պիտի կանգնէին Հայ Եկեղեցւոյ եւ ազգին որպէս ինքնուրոյն եւ անկախ եկեղեցի: Օրմանեան Պատրիարքի նկատողութեամբ Օձնեցի Կաթողիկոս, կանոնները դասաւորելով եւ հաստատելով իր Հայրապետական Աթոռին մէջ, կը ջանար յոյն բիւզանդական կրօնական ճնշումները նուազեցնել, նոյնիսկ «Արաբ իսլամիստներու քաղաքականութեան դիմելով անձամբ երբ ինք էր որ Օմար իսլամիստներէն ներկայացաւ Դամասկոսի մէջ 720 թուականին ազատ արձակել տալու համար բանտարկեալ հայ նախարարները»: Օրմանեան Պատրիարքի հաստատումով «Օձնեցի վճռական կերպով հեռու պահեց Հայ Եկեղեցին յունադաւան ճնշումներէն, մասնաւորաբար Քաղկեդոնական ինդիկներէն որոնց մասամբ ենթարկուած էին նախորդող եզր Փառաժնակերտցի եւ Եղիա Արճիշեցի Կաթողիկոսները, որոնք սկար գտնուեցան օրուան քաղաքական գէշ կացութեան ընթացքին»:

## Երկատորեակը

Վազգէն Յակոբեանի երկհատորեակը, պատկառելի եւ անկրկնելի աշխատասիրութիւն մը ըլլալով կը հանդիսանայ միակ աղբիւրը Հայաստանեայց Եկեղեցւոյ կանոններուն, ուր կան նաեւ տասնեակ մը եւ աւելի տիեզերական եւ միջեկեղեցական (ոչ-հայկական) ժողովներու կանոնները, որոնք Հայ Եկեղեցւոյ տուած են տիեզերական եկեղեցւոյ հիմքն ու վաւերականութիւնը: Վազգէն Յակոբեանէ առաջ Հայ Եկեղեցւոյ կանոնագիրքին նկատմամբ լուրջ հետաքրք-

րութիւն ցոյց տուած են գոյգ մը հոգեւորականներ, Արսէն Ղլտճեան եւ Ներսէս Մելիքթեան Արքեպիսկոպոսները, որոնց աշխատասիրութիւնները թէեւ հիմնական կարեւորութիւն կ'ընձեռնէին որպէս առաջին հրատարակեալ երկեր, այսուհանդերձ Յակոբեանի այս վերջին հրատարակութիւններու լոյսին տակ նուազ արժէք կը ներկայացնէին, նկատի ունենալով վերջնոյս այլապէս բժախնդիր ձեռագրական բաղդատութիւններն ու տարընթեցումները, եւ յատկապէս իր մատուցած ընդարձակ Ներածականը որ ինքնին բանասիրական հատոր մը կը ներկայացնէ:

Մենք ներկայ գրութեամբ անհրաժեշտ տեսանք գատորոշելու միայն Հայ Եկեղեցական ժողովներն ու անոնց հաստատած կանոնները: Քննարկելով Վազգէն Յակոբեանի գոյգ հատորները գտանք որ առաջին հատորը 201 Հայ Եկեղեցւոյ կանոնախումբեր կը բովանդակէ, սկսեալ Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ Յովհաննէս Օձնեցի: Իսկ երկրորդ հատորը 134 կանոնախումբեր՝ Սիրոն Բաւոնեցի Կաթողիկոսէն սկսեալ: Անշուշտ Օձնեցի Հայրապետէն ետք կատարուած մեծ թիւով յաւելումները անդրադարձ ունեցած են այս նոյն Բ հատորին մէջ, երբեմն նախկին ու աւելի յաճախ գալիք հայրապետներու անուններով աւելի ճոխացած կանոններով:

## Եկեղեցական ժողովները

Չորրորդ դարէն մինչեւ 17-րդ դար ընդամէնը 23 հայ եկեղեցական ժողովներ գումարուած են, որոնցմէ 14 ժողովները հրաւիրուած են ու նախագահուած օրուան Հայոց Հայրապետին կողմէ անձամբ: Իսկ 9 ժողովներ գումարուած են պետական իշխանաւորներու հրաւիրով: Այդ ժողովներն են.

Ներսէս Մեծ Պարթեւ Հայրապետի Աշտիշատի ժողովը 354 թուին, Շահապիվանի ժողովը 444 թուին «խումբ մը եղբարց» կողմէ, Յովսէփ Հողոցմեցիի՝ Արտաշատի ժողովը 449 թուին, Բաբգէն Ոթմսեցիի՝ Դուինի Ա ժողովը 506-ին, Ներսէս Բագրեւանդացիի՝ Դուինի Բ ժողովը 554-ին, Ներսէս Գ Իշխանցիի՝ Դուինի Դ ժողովը՝ 645-ին, Յովհաննէս Օձնեցիի ժողովները՝ Դուինի Ե ժողովը 720 թուի եւ Մանազկերտի ժողովը 726-ին, Սիրոն Բաւոնեցիի Պարտաւի ժողովը

Շարք էջ 18

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

